



Արմավիի զարգացման
կենտրոն

***Կանանց նկատմամբ
ընտանեկան բռնությունն Արմավիրում***

Հարցման արդյունքների զեկույց

Արմավիր 2010

Բովանդակություն

Ներածություն	3
Մեթոդաբանություն	3
Հիմնական արդյունքները.	4
<i>Ընտանեկան բռնության ընկալումը</i>	4
<i>Ընտանեկան բռնության շարժառիթների ընթրումը</i>	5
<i>Վերաբերմունքն ընտանեկան բռնության նկատմամբ</i>	7
<i>Ընտանեկան բռնության և ճնշման միջադեպերը</i>	8
<i>Վերաբերմունքը հանրային գործակալությունների նկատմամբ</i>	11
<i>Ընտանեկան բռնության նվազեցման ուղիները</i>	12
Հիմնական արդյունքների ամփոփում	13
Աղյուսակներ	17



Սույն հրապարակումը հնարավոր է դարձել իրականացնել Բաց հասարակության ինստիտուտի օժանդակությամբ հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատու է «Արմավիրի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպությունը, և նրանում արտահայտված տեսակետները կարող են չհամընկնել ԲՀԻՕՀՀՄ-ի տեսակետների հետ:

Ներածություն

ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ բռնության վերացման մասին հռչակագիրը սահմանում է բռնությունը կանանց նկատմամբ որպես «սեռական հատկանիշով բռնության

ցանկացած գործողություն, որը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել ֆիզիկական, սեռական կամ հոգեբանական վնասի կամ տառապանքի, ներառյալ նմանատիպ գործողությունների սպառնալիքները, հարկադրանքը կամ բռնի ազատագրկումը թե՛ հասարակական, թե՛ անձնական կյանքում»:

«Արմավիրի զարգացման կենտրոն» հասարակակն կազմակերպությունը ներգրավված է Հայաստանում կանանց նկատմամբ ընտանեկան բռնության և ճնշման դեմ պայքարում: Ուստի կազմակերպությանն անհրաժեշտ է վստահելի տեղեկատվություն մարզում առկա իրավիճակի մասին՝ կանանց նկատմամբ ընտանեկան բռնության կանխման միջոցառումներ ձեռնարկելու համար: Այդ սոցիալական խնդիրը քողարկված է և թերի է ուսուցման սիրված Արմավիրի մարզում: Համագործակցելով Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի հետ՝ «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ-ն Արմավիրի մարզի մեկ քաղաքային և տաս գյուղական համայնքներում իրականացրել է հարցում: Հարցման նպատակն է հասկանալ կանանց վերաբերմունքը կանանց հանդեպ ընտանեկան բռնության նկատմամբ, պարզել դրա շարժառիթների և լուծումների ըմբռնումը, որոշել Արմավիրում կանանց նկատմամբ ընտանեկան բռնության և ճնշման չափերը, ինչպես նաև բացահայտել ընտանիքում կանանց նկատմամբ գործադրվող հոգեբանակն և ֆիզիկական բռնության վերջին միջադեպերը:

Մեթոդաբանություն

Ընտանեկան բռնության վերաբերյալ հարցումն իրականացվել է Արմավիրի մարզի Արմավիր քաղաքում և հետևյալ գյուղական համայնքներում՝ Այգեշատ, Արագափ, Արմավիր, Արևիկ, Երասխահուն, Ծաղկունք, Ջրաշեն, Տանձուտ, Փշատավան և Ֆերիկ: Արմավիր քաղաքում ընտրանքն իրականացվել է հաշվի առնելով համայնքի 18-ից մինչև 75 տարեկան կին բնակիչների գլխավոր համախմբությունն ըստ Արմավիրի մարզպետարանի կողմից հրապարակված համայնքների բնակչության տվյալների: Գյուղական համայնքներում ԱԶԿ ՀԿ-ն դիմել է տասը գյուղերի գյուղապետարաններին՝ տնային տնտեսությունների թիվը որոշելու համար, և տնային տնտեսությունները տեղում ընտրվել են պատահականորեն:

Տնային տնտեսությունների ներսում հարցվածներն ընտրվել են «ուն ծննդյան օրն է մոտ հարցմանը» մեթոդով: Սակայն, հաշվի առնելով այս հետազոտության հատուկ նպատակները, ընտրանքի մեջ ընդգրկվել են միայն ամուսնացած կամ զուգընկեր ունեցող կանայք: Հարցվածները տեղեկացվել են, որ պատասխանների անանունությունը երաշխավորվում է: Ի լրումն, հարցազրույցների սկզբում հարցվածներին ցույց են տրվել հարցաթերթիկները՝ նրանց հավաստիացնելու համար, որ իրենց անունները կամ հասցեները ոչ մի տեղ չեն գրանցվում:

Ընդհանուր հաշվով 2009թ.-ի նոյեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 10-ը անց է կացվել 302 դեմ առ դեմ հարցազրույց: Այդուսակ 1-ը ցույց է տալիս անցկացված հարցազրույցների թիվը՝ համայնքային կտրվածքով, ինչպես նաև քաղաքային և գյուղական ընտրանքներում ընդգրկված տնային տնտեսությունների թիվը: Ըստ անհրաժեշտության՝ որակական տվյալները կողավորվել են, և բոլոր տվյալները մուտքագրվել են SPSS (վիճակագրական փաթեթ հասարակական ուսումնասիրությունների համար) վերլուծության համար:

Հարցման մերժման տոկոսը կազմել է 11: Հարցմանը մասնակցել չցանկացողների 82 տոկոսը պատճառաբանել է, որ զբաղված է, 15 տոկոսը պարզապես չի ցանկացել մասնակցել հարցմանը, իսկ 3 տոկոսը չի հավատացել հարցման գաղտնիությանը:

Հիմնական արդյունքները.

Այս բաժինն ամփոփում է հարցման արդյունքները և բաղկացած է հետևյալ ենթաբաժիններից. ընտանեկան բռնության մասին պատկերացումներն ու վերաբերմունքը, ընտանեկան բռնության շարժառիթների ընկալման մակարդակը, հանրային գործակալությունների նկատմամբ վերաբերմունքը, ընտանեկան բռնության նվազեցման ուղիները, ինչպես նաև Արմավիրում ընտանեկան բռնության և ճնշման միջադեպերը, ընտանեկան ֆիզիկական բռնության չափերը:

Հարցվածների միջին տարիքը 36 է: Հարցվածների 36 տոկոսն ավարտել է մասնագիտական դպրոց/ուսումնարան, տեխնիկում, մոտ 33 տոկոսը՝ 10-ամյա միջնակարգ դպրոց, և շուրջ 18 տոկոսն է, որ հաճախել կամ ավարտել է բարձրագույն ուսումնական հաստատություն: Հարցվածների 42 տոկոսն աշխատում է պետական կամ մասնավոր սեկտորներում՝ ներառյալ ինքնագբաղվածությունն ու գյուղատնտեսությունը, իսկ 52 տոկոսը տնային տնտեսուհիներ են եղել:

Հարցվածների 82 տոկոսն ամուսնացած է, 6 տոկոսն՝ այրի և 5 տոկոսն՝ ամուսնալուծված:

Ընտանեկան բռնության ընկալումը

Հարցվածների 11 տոկոսի ընկալմամբ ընտանեկան բռնություն է համարվում միայն հարվածելն ու խփելը, նրանցից 13 տոկոսը կարծում է, որ ընտանեկան բռնություն է սեռական հարաբերություն պահանջելը նույնիսկ չցանկանալու դեպքում, 3 տոկոսի համար դա տեղաշարժումների/տեղ գնալու վերահսկումն է, սակայն մեծամասնությունը՝ 78 տոկոսը, կնոջ նկատմամբ ընտանեկան բռնությունը համարում է վերոնշյալ բոլորը՝ ավելացրած գոռգռալ, հայիոյելը, ընկերների և բարեկամների ընտրության սահմանափակումը: Հատկանշական է, որ առաջին երկու տարբերակներին առավել հակված էին գյուղական համայնքների կանայք՝ նշելով, որ տեղ գնալու վերահսկումն ու ընկերների ընտրության սահմանափակումը դեռևս բռնություն չէ կնոջ հանդեպ: Նրանց ընկալմամբ դա սովորական է, և որ ավանդական հայ տղամարդն իրավունք ունի որոշելու կնոջ ընկերների և բարեկամների այն շրջանակը, որոնց հետ նա կցանկանար, որ իր կինը շփվի:

Հարցվածների 68 տոկոսը նշել է, որ «լավ կինը միշտ ենթարկվում է իր ամուսնուն, նույնիսկ համաձայն չլինելու դեպքում»: Ընդ որում, գյուղական բնակիչներն ավելի հակված են համաձայնելու այդ ձևակերպմանը, քան Արմավիր քաղաքի բնակիչները: Խնդիրը պարզապես կայանում է նրանում, որ գյուղական համայնքներն ավելի ավանդական և պահպանողական են, որտեղ ընտանիքներում դեռ պահպանված են հայկական ավանդական ընտանեկան դերերն ու կարծրատիպերը:

Հարցված կանանց 52 տոկոսը համաձայնել է, որ ամուսնու համար կարևոր է ցույց տալ իր կնոջն ու բոլորին, թե ով է ղեկավարում տանը: Նրանց 41 տոկոսն է միայն համաձայնել այն ձևակերպմանը, որ կինը պետք է հնարավորություն ունենա

ընտրելու իր ընկերներին, նույնիսկ եթե ամուսինը նրանց չի հավանում: Ընդ որում այստեղ նույնպես գերակշռում են քաղաքային բնակիչների կարծիքները:

Հետաքրքրական է, որ հարցված կանանց միայն 19 տոկոսն է կարծիք հայտնել, որ «նորմալ է համարվում, երբ ամուսինն արգելում է իր կնոջն աշխատել», ընդ որում կարծիքը հայտնել են բացառապես գյուղական համայնքների կանայք:


Հաջորդ դիրքորոշումը, որի վերաբերյալ պիտի կարծիք հայտնեին հարցվող կանայք վերաբերում էր նրան, թե արդյոք, կնոջ պարտականությունն է սեռական հարաբերություն ունենալ ամուսնու հետ նույնիսկ չցանկանալու դեպքում: Պարզվեց, որ նրանց 31 տոկոսը համաձայնել է վերոնշյալ կարծիքի հետ՝ նշելով, որ դա հենց ամուսնական պարտականություն է: Հետաքրքիր է, որ այստեղ էական տարբերություններ չկային գյուղական և քաղաքային բնակիչների կարծիքների միջև:

Բոլոր վերոնշյալ հարցերի շրջանակներում կարծիքներն էականորեն տարբերվել են կապված կրթության գործոնի հետ: Ըստ այդմ, այն հարցվողները, որոնք ունեցել են 10-ամյա միջնակարգ կրթություն կամ միջնակարգ մասնագիտական կրթություն ավելի հակված են եղել համաձայնել այն կարծիքների հետ, որ «լավ կինը միշտ ենթարկվում է իր ամուսնուն նույնիսկ համաձայն չլինելու դեպքում» (56 տոկոս՝ ի տարբերություն 11 տոկոսի), «ամուսնու համար կարևոր է ցույց տալ, թե ով է ղեկավարում տանը» (48 տոկոս՝ ի տարբերություն 21 տոկոսի), «նորմալ է համարվում, երբ ամուսինն արգելում է իր կնոջն աշխատել» (48 տոկոս՝ ի տարբերություն 21 տոկոսի), և «կնոջ պարտականությունն է սեռական հարաբերություն ունենալ ամուսնու հետ նույնիսկ չցանկանալու դեպքում» (53 տոկոս՝ ի տարբերություն 29 տոկոսի): Մյուս կողմից բարձրագույն ուսումնական հաստատություն ավարտած հարցվողներն ավելի հակված են եղել համաձայնելու այն կարծիքին, որ «կինը պետք է հնարավորություն ունենա ընտրելու իր ընկերներին, նույնիսկ եթե ամուսինը նրանց չի հավանում» (76 տոկոս):

Ընտանեկան բռնության շարժառիթների ընթրումը

Մի քանի հարցերի օգնությամբ բացահայտվել է ընտանեկան բռնության պատճառների ընթրումը հարցված կանանց կողմից: Ըստ այդմ կարծիքները բաշխվել են հետևյալ կերպ.

Գծապատկեր 1. Ընտանեկան բռնության պատճառների դասակարգումն ըստ հարցվածների.



Հարցվածների 97 տոկոսը կարծում է, որ «բնագրի և աշխատանքի օգտագործումը ընտանեկան բնության առաջնային պատճառներից մեկն է»: Նրանց 82 տոկոսի կարծիքով «բնագրի ինտելեկտի պակասը հանդիսանում է ընտանեկան բնության առիթ»: Արմավիրի կանանց գրեթե 77 տոկոսը հայտնել է, որ «ընտանեկան բնությունն առկա է, քանի որ կանանց մեծամասնությունը չի լքում իր վրա բնագրի տղամարդուն»: Հարցվածների շուրջ 72 տոկոսը կարծում է, որ «ֆինանսական խնդիրները կամ աշխատանքի կորուստը բարձրացնում է ընտանեկան բնության հավանականությունը»: Նրանց 68 տոկոսը համաձայնել է, որ «ընտանեկան բնությունը տղամարդկանց և կանանց միջև անհավասար հարաբերությունների արդյունք է»: Հարցված կանանց 57 տոկոսը նկատել է, որ «չատ տղամարդիկ բնություն են գործադրում, քանի որ մանկության ընթացքում իրենց տանը բնության ականատեսն են եղել»: Հարցվածների կեսը՝ 52 տոկոսն էլ նշել է, որ «տուժածի կրթության/ինտելեկտի պակասը բարձրացնում է ընտանեկան բնության հավանականությունը»: Եվ վերջապես հարցվածների 41 տոկոսը կարծում է, որ «այն տղամարդիկ, ովքեր ծեծում են իրենց կանանց, հիմնականում հոգեկան հիվանդներ են»:

Կրթության գործոնն այստեղ եական դեր խաղաց երկու հիմնական կարծիքների շրջանակներում: Այն է՝ բնագրի և տուժածի կրթության պակասը՝ որպես ընտանեկան բնության շարժառիթ: Բարձրագույն կրթություն ունեցողների 97 տոկոսի կարծիքով «բնագրի կրթության պակասը բարձրացնում է ընտանեկան բնության հավանականությունը», ի տարբերություն բարձրագույն կրթություն չունեցողների 74 տոկոսի: Նմանապես, բարձրագույն կրթություն ունեցող հարցվածների 88 տոկոսն է կարծում, որ «տուժածի կրթության պակասը բարձրացնում է ընտանեկան բնության հավանականությունը», ի տարբերություն՝ բարձրագույն կրթություն չունեցող հարցվածների 57 տոկոսի:

Վերաբերմունքն ընտանեկան բնության նկատմամբ


Մի շարք հարցերի օգնությամբ փորձ է արվել պարզելու, թե ինչ վերաբերմունք ունեն Արմավիրի կանայք ընտանեկան բնության վերաբերյալ: Առաջադրվել էին մի քանի

կարծիքներ, որոնց վերաբերյալ հարցվողները պետք է արտահայտեին իրենց կարծիքները: Եվ այսպես, գրեթե բոլոր հարցվողների (95 տոկոս) կարծիքով «ամուսինը երբեք չպետք է խփի իր կնոջը»: Հարցված կանանց 38 տոկոսը կարծում է, որ «եթե ամուսինը կոպիտ է վերաբերվում իր կնոջը, ապա ընտանիքից դուրս մարդիկ պետք է միջամտեն»: Ի հակադրություն վերոնշյալի, հարցվածների 63 տոկոսը կարծում է, որ «ոչ մեկի գործը չէ, եթե ամուսինը տան վեճի ընթացքում ֆիզիկապես բռնանում է իր կնոջ վրա»: «Շատ դեպքերում ընտանեկան բռնությունն ավելի լավ է լուծել տան ներսում, քան թե դիմել ոստիկանության» կարծիքը նշել էր հարցվածների 94 տոկոսը: Պարզվում է, որ հարցված կանանց միայն 21 տոկոսը կդիմեր ոստիկանության, եթե ենթարկվեր ընտանեկան բռնության: Այնուամենայնիվ, արմավիրցի կանանց մեծամասնությունը՝ 75 տոկոսը, կարծում է, որ ընտանեկան բռնությունը տարածված խնդիր է Հայաստանում, և նրանց մեկ երրորդի կարծիքով է, որ ընտանեկան բռնությանը հասարակական խնդիր է և պետք է լուծվի կառավարության կողմից:

Հատկանշական է, որ այստեղ էական դեր է խաղում նորից հարցվողի ապրելավայրը: Գյուղական համայնքների բնակիչներն ավելի շատ, քան քաղաքայիններն են համամիտ, որ ընտանեկան բռնությունը տան ներսում պետք է լուծվի, ոչ ոք չպետք է իմանա այդ մասին, և որ չեն դիմի ոստիկանության, կամ այլ միջոցների: Խնդիրը կայանում է, նրանում, որ նրանք դեռևս չեն գիտակցում խնդրի խորության աստիճանը, և որ դա ընդունում են սովորական՝ հարմարվելով դրան:

Այնուհետև պարզվել է, թե արդյոք հարցված կանանց կարծիքով, ֆիզիկական ուժի գործադրումն արդարացված է կանանց նկատմամբ, և որ դեպքերում է այն արդարացվում: Ստորև ներկայացված է կանանց նկատմամբ ֆիզիկական ուժի գործադրումն արդարացնող հարցվածների տոկոսները:

Գծապատկեր 2. Կանանց նկատմամբ ֆիզիկական ուժի գործադրումն արդարացնող հարցվածների տոկոսները



Այսպիսով, ակնհայտ է, որ հարցվածների շուրջ 75 տոկոսը համաձայնել է, որ ոչ հավատարիմ լինելն արդարացնում է ֆիզիկական ուժի գործադրումը կանանց նկատմամբ: Հարցված կանանց 42 տոկոսի կարծիքով, երեխաներին անտեսելը ֆիզիկական ուժի գործադրումն արդարացնող պատճառ է: Նրանց մեկ երրորդից ավելին կարծում է, որ ամուսնուն չենթարկվելը կարող է հանդիսանալ ֆիզիկական

ուժի գործադրման պատճառ կնոջ նկատմամբ: Այնուհետև նշվել են առանց ամուսնուն տեղյակ պահելու ինչ-որ տեղ գնալը (28.8 տոկոս), ամուսնու բարեկամների նկատմամբ ոչ հարգալից վերաբերմունքը (23.2 տոկոս), ամուսնու հետ վիճելը (19.8 տոկոս), տնային գործերը ոչ պատշաճ կատարելը (11.9 տոկոս) և սեռական հարաբերություններ մերժելը (7 տոկոս):

Վիճակագրական տարբերություններ են վեր հանվել քաղաքային և գյուղական բնակիչների միջև այդ չափանիշներից յուրաքանչյուրի դեպքում, ընդ որում գյուղական բնակիչներն ավելի հակված են համաձայնելու, քան քաղաքային բնակիչները, որ այդ պատճառներից յուրաքանչյուրն արդարացնում է ֆիզիկական ուժի գործադրումը կանանց նկատմամբ:

Բացի այդ վիճակագրական տեսանկյունից տարբերություններ գոյություն ունեն կրթության և զբաղվածության հիման վրա առանձնացված խմբերի միջև:

Ավելի շատ բարձրագույն կրթություն չունեցողներ (84 տոկոս), քան բարձրագույն կրթություն ունեցող հարցվածներ (62 տոկոս) են արդարացնում ֆիզիկական ուժի գործադրումն այն կանանց նկատմամբ, ովքեր հավատարիմ չեն: Նմանապես, ավելի շատ բարձրագույն կրթություն չունեցողներ (54 տոկոս), քան բարձրագույն կրթություն ունեցող հարցվածներ (32 տոկոս) կարծում են, որ երեխաներին անտեսելն արդարացնում է ֆիզիկական ուժի գործադրումը կանանց նկատմամբ: Ավելի շատ բարձրագույն կրթություն չունեցողներ (46 տոկոս), քան բարձրագույն կրթություն ունեցող հարցվածներ (24 տոկոս) են նշում, որ ամուսինները կարող են ուժ գործադրել իրենց կանանց նկատմամբ, երբ վերջիններս իրենց չեն ենթարկվում:


Զբաղվածության գործոնը նույնպես կարևորվում է կարծիքների ձևավորման հարցում: Ավելի շատ աշխատանք չունեցող հարցվածներ (78 տոկոս), քան աշխատանք ունեցող հարցվածներ (64 տոկոս) են կարծում, որ ամուսինը կարող է ֆիզիկական ուժ գործադրել կնոջ նկատմամբ, երբ նա հավատարիմ չէ:

Ընտանեկան բռնության և ճնշման միջադեպերը

Նպատակ ունենալով պարզել, թե որքանով է տարածված ընտանեկան բռնության երևույթը Արմավիրի մարզում, հարցվածներին խնդրվել է պատասխանել, թե արդյոք իրենք ճանաչում են ընտանեկան բռնության ենթարկված կանանց, ընդ որում առանձնացվել է հոգեբանական և ֆիզիկական ճնշման: Այնուհետև նրանց խնդրվել է նշել, թե իրենց ծանոթ տաս կանանցից քանիսն են ենթարկվել հոգեբանական և քանիսը՝ ֆիզիկական ճնշման տանը: Նրանց 94 տոկոսը ճանաչում է առնվազն մեկ հոգեբանական և ֆիզիկական ճնշման ենթարկված կնոջ: Հարցվածները, միջին հաշվով, ճանաչում են մոտ 6 հոգեբանական ճնշման ենթարկված և 4 ֆիզիկական ճնշման ենթարկված կնոջ:

Այնուհետև պարզվել է, թե հարցվողները ինչ հաճախականությամբ են ենթարկվել հոգեբանական ճնշման և ուն կողմից: Ստորև ներկայացված գծապատկերը ներկայացնում է հոգեբանական ճնշման հաճախ և երբեմն տեղի ունեցող գործողությունների գումարային տոկոսները:

Գծապատկեր 3. Հոգեբանական ճնշման գործողությունների տոկոսները՝ հաճախ և երբեմն պատասխանները համախմբած



Հարցվածների 53 տոկոսը նշել է, որ իր տեղափոխությունները վերահսկել են հաճախ կամ երբեմն, մինչդեռ 15 տոկոսն ասել է՝ հազվադեպ: Պարզվել է, որ հարցվածների շուրջ 40 տոկոսի հասարակական կյանքը տնից դուրս սահմանափակված է, իսկ նրանց մեկ երրորդի վրա գոռացել, ճչացել կամ հայհոյել են հաճախ կամ երբեմն: Հարցվածների 20 տոկոսին քննադատել են ուրիշների մոտ, իսկ 17 տոկոսին արգելել են տեսնել իր ընտանիքի անդամներին կամ ընկերներին: Հարցված կանանց 17 տոկոսին սպառնացել են, նրանց շուրջ 16 տոկոսի երեխաներին վրա գոռացել կամ սպառնացել են այնպես, որ կարող էին ցավ պատճառել: Պարզվել է նաև, որ հարցվածների գրեթե 15 տոկոսին նվաստացրել են ուրիշների մոտ, իսկ 11 տոկոսին՝ զրկել փողոցից կամ դուրս գնալուց: Եվ բարեբախտաբար, նրանցից շատ քչերին են արգելել օգտվել տարրական անհրաժեշտ միջոցներից՝ հեռախոսից՝ 6 տոկոս:


Հատկանշական է, որ հոգեբանական ճնշվածության ենթարկված կանայք ավելի հաճախ հանդիպել են գյուղական համայնքներում: Ակնհայտ է, որ գյուղական ընտանիքներում պահպանվում են ավանդական հայկական սովորույթները, և որ ամենակարևորն ու ցավալին այն է, որ գյուղական համայնքների կանայք չեն գիտակցում, որ դա համարվում է բռնություն, կամ ոտնահարվում են իրենց իրավունքները:

Ինչ վերաբերում է նրան, թե ուն կողմից է գործադրվել հոգեբանական ճնշումը, պարզվեց, որ դրանք բացի ամուսինների կողմից գործադրվելուց (64 տոկոս), գործադրվում են նաև սկեսուրների (18 տոկոս), սկեսրայների (8 տոկոս) և տեգրերի կողմից (6 տոկոս):

Ֆիզիկական ճնշման միջադեպերի հաճախականությունը բացահայտելու համար նույնպես հարցվողներին առաջադրվել էին մի շարք գործողություններ, որոնց պետք է պատասխանեին, թե ինչ հաճախականությամբ է դրանցից յուրաքանչյուրը նրանց հետ պատահել:

Հարցվածների 38 տոկոսը ենթարկվել է ցանկուն նշված ֆիզիկական ճնշման առնվազն մեկ գործողության, ընդ որում նրանց 22 տոկոսը գյուղական համայնքների բնակիչներ են: Չընզրկելով «հազվադեպ» պատասխանները՝ ստորև ներկայացվում է ֆիզիկական ճնշման միջադեպերի հաճախականությունը:

Գծապատկեր 4. Ֆիզիկական ճնշման գործողությունների տոկոսները՝ հաճախ և երբեմն պատասխանները համախմբած



Գծապատկերից պարզ է, որ ամենից հաճախ ֆիզիկական ճնշման տարբերակ հարցվողների կողմից նշվել է «ինձանից սեռական հարաբերություն են պահանջել այն ժամանակ, երբ ես չէի ցանկանում» տարբերակը: Այդպես են պատասխանել հարցվածների 31 տոկոսը: Նրանց շուրջ մեկ երրորդին ձեռքի ափով հարվածել են մարմնին, ձեռքերին կամ ոտքերին: Հարցվածների 18 տոկոսի իրերը ջարդել են, իսկ 15 տոկոսի վրա կամ սեղանակալով իրեր են շարտել: Հարցվածների 14 տոկոսը նշել է, որ իրեն ուժեղ իրել կամ բռնել են: Իսկ 13 տոկոսի երեխաներին հարվածել կամ վճատել են: Այնուհետև նշվել են «ձեռքերս ոլորել են, մազերս՝ քաշել» տարբերակը (8 տոկոս), «ինձ արգելել են շարժվել կամ դուրս գալ տանից» (6 տոկոս), «բռունցքով հարվածել են իմ մարմնին, ձեռքերին կամ ոտքերին» (3 տոկոս) տարբերակները:


Եթե հոգեբանական ճնշումը բացի անուսնու կողմից գործադրվել էր նաև սկեսուրների և սկեսարայրների կողմից, ապա ֆիզիկական ճնշման ենթարկված հարցվածների 94 տոկոսը նշել է, որ բռնարարներն իրենց ամուսիններն են, և միայն 4 տոկոսն է նշել, որ իր սկեսուրն է ճնշում գործադրել իր նկատմամբ: Այդ հիմնական բռնարարների առումով քաղաքային և գյուղական բնակիչների միջև նշանակալի վիճակագրական տարբերություններ չեն հայտնաբերվել:

Այնուհետև, փորձ է արվել պարզելու, թե արդյոք ֆիզիկական բռնության ենթարկվելիս կանայք դիմում են որևէ մեկի օգնությանը, թե ոչ, և եթե այո, ապա ում կամ ինչ հաստատություն: Պարզվում է, որ ֆիզիկական բռնության ենթարկված կանանց միայն 24 տոկոսն է երբևէ դիմել ինչ-որ մեկի օգնությանը՝ բռնությանը վերջ տալու համար: Նրանց 76 տոկոսը ոչ մեկին չի դիմել, և օգնության չդիմելու ամենահաճախ նշված պատճառն այն է, որ հարցվածները ինքնուրույն են լուծել խնդիրը (42 տոկոս):

Հարցվածները նշել են նաև այլ պատճառներ, որոնք բացատրում են, թե ինչու իրենք չեն դիմել օգնության: Հարցվածների 20 տոկոսի կարծիքով այդպիսի խնդիրները պետք է լուծվեն ընտանիքի ներսում, նրանց 18 տոկոսը չի դիմել որևէ մեկին, քանի որ խնդիրը լուրջ չեն համարել, դրսի օգնության դիմելն անոթալի և անհարամար է (8 տոկոս), չկար որևէ մեկը, ում կարող էր դիմել հարցվածը օգնության համար (5 տոկոս), հարցվողը պարագապես չի ցանկացել դիմել որևէ մեկին (4 տոկոս), և հարցվածների միայն 3 տոկոսն է վախեցել հետևանքներից, դրա համար չի դիմել որևէ մեկին:

Այն հարցվածների համար, ովքեր ասել են, որ դիմել են օգնության, թվարկվել են ոչ պաշտոնական և պաշտոնական կառույցներ և խնդրվել է նշել, թե այդ ցանկից ում են իրենք դիմել: Նրանց 65 տոկոսը դիմել է ընտանիքի անդամներին, 22 տոկոսն օգնություն է խնդրել հարևաններից, և գրեթե 12 տոկոսն դիմել է իր ընկերներին: Բացի ոչ պաշտոնական խմբերից, հարցվածներին ներկայացվել էր նաև պաշտոնական ծառայությունների ցուցակ, որոնցից միայն ոստիկանությանը դիմել էր ճնշման ենթարկված կանանց միայն 3 տոկոսը: Հարցվածներից ոչ ոք չի դիմել դատարաններ, իրավաբանական խորհրդատվության, բուժ.աշխատողների, հասարակական կազմակերպությունների, թեժ գիծ, որը ցույց է տալիս, որ իրենք կա՛մ իրազեկ չեն նման ծառայությունների մասին, կա՛մ չեն վստահում այդ հաստատությունների:


Գծապատկեր 5. Օգնության համար ոչ պաշտոնական և պաշտոնական կառույցներին դիմողների տոկոսը



Վերաբերմունքը հանրային գործակալությունների նկատմամբ

Հարցման ընթացքում փորձ է արվել պարզելու, թե Արմավիրի կանայք ընտանեկան բռնության դեմ պայքարի գործում որքանով են վստահում այնպիսի կառույցների, ինչպիսիք են հասարակական կազմակերպությունները, դատարանները, ոստիկանությունը, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը:

Գծապատկեր 6. Վստահությունը մի քանի գործակալությունների հանդեպ ընտանեկան բռնության դեմ պայքարի գործում



Եթե չընդգրկենք «չգիտեն» պատասխանները, ապա կտեսնենք, որ հարցվածների մոտ կեսը նշել է, որ հասարակական կազմակերպությունները վստահելի են ընտանեկան բռնության դեմ պայքարի գործում: 37 տոկոսն ասել է, որ ուստիկանությունն է վստահելի: Հարցվածների 27 տոկոսը վստահում է դատարաններին, մինչդեռ ընտանեկան բռնության դեմ պայքարելիս միայն 12 տոկոսն է վստահում աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը: Հարկ է նշել, որ բավական մեծ թվով հարցվածներ չեն կարողացել պատասխանել այդ բոլոր գործակալությունների վստահելիության մասին հարցերին: Հարցվածների 38 տոկոսը չի կարողացել նշել, թե որքանով է վստահելի աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը ընտանեկան բռնության դեմ պայքարում, մոտ 24 տոկոսը դժվարացել է պատասխանել դատարանների, 23 տոկոսը՝ ուստիկանության և 15 տոկոսը՝ հասարակական կազմակերպությունների արդյունավետության մասին:

Հատկանշական է, որ քաղաքային համայնքի բնակիչներն ավելի հակված են եղել համաձայնելու, քան գյուղական բնակիչները, որ ՀԿ-ներն ավելի արդյունավետ կերպով կարող են պայքարել ընտանեկան բռնության դեմ: Իսկ բարձրագույն կրթություն չունեցողներն ավելի հոռետեսորեն են տրամադրված ընտանեկան բռնության դեմ պայքարող գործակալությունների գործունեությանը՝ հակված լինելով կարծել, որ ոչ մի հաստատություն էլ չի կարող ամբողջովին պայքարել այդ արատավոր երևույթի դեմ:


Ընտանեկան բռնության նվազեցման ուղիները

Մի շարք հարցերի միջոցով հարցվածներին խնդրվել է 1-ից (բոլորովին ոչ արդյունավետ) մինչև 10 (շատ արդյունավետ) սանդղակի օգնությամբ գնահատել հինգ լուծումների արդյունավետությունը, այն լուծումների, որոնք կարող են նվազեցնել ընտանեկան բռնությունը:

Հարցվածներն ամենաբարձր գնահատականը տվել են հանրային կրթության միջոցով իրազեկության բարձրացմանը (միջինը=7,8): Հետևյալ լուծումներն ստացել են փոքր-ինչ ավելի ցածր գնահատականներ. հոգեբանական խորհրդատվության տրամադրում բռնարարներին (միջինը=7,3), հոգեբանական խորհրդատվության տրամադրում տուժածներին (միջինը=7,1), ընտանեկան բռնության տուժածներին

օժանդակության ավելացում (միջինը=5,4) և մեղավոր ճանաչվածների բանտարկում (միջինը=4,4):

Գծապատկեր 7. Ընտանեկան բռնությունը նվազեցնող լուծումների գնահատականները 1-ից մինչև 10 սանդղակում



Քաղաքային բնակչությունը գյուղականի համեմատությամբ ավելի բարձր գնահատականներ է տվել հանրային կրթության միջոցով իրազեկության բարձրացմանը: Նմանապես բարձրագույն կրթություն ունեցողներն ավելի շատ գնահատականներ են տվել «հանրային կրթության միջոցով իրազեկության բարձրացման» և «հոգեբանական խորհրդատվության տրամադրում բռնարաներին և տուժածներին» լուծումներին:

Հիմնական արդյունքների ամփոփում

Այս բաժնում ամփոփված են կանանց նկատմամբ ընտանեկան բռնության և ճնշումների վերաբերյալ Արմավիրի մարզում իրականացված հարցման հիմնական արդյունքները:

Ընտանեկան բռնության ընկալումը

- Արմավիրի կանանց 78 տոկոսի ընկալմամբ ընտանեկան բռնությունը բաղկացած է հետևյալ տարրերից. հարվածել, խփել, գոռգռալ, հայիոյել, սեռական հարաբերություն պահանջելը նույնիսկ չցանկանալու դեպքում, ընկերների և բարեկամների ընտրության սահմանափակում, տեղաշարժումների վերահսկում:
- Հարցվածների 68 տոկոսը կարծում է, որ «լավ կինը միշտ ենթարկվում է իր ամուսնուն, նույնիսկ համաձայն չլինելու դեպքում»:
- Հարցված կանանց կեսը համաձայնել է, որ ամուսնու համար կարևոր է ցույց տալ իր կնոջն ու բոլորին, թե ով է ղեկավարում տանը:

- Նրանց 41 տոկոսը համաձայնել է այն ձևակերպմանը, որ կինը պետք է հնարավորություն ունենա ընտրելու իր ընկերներին, նույնիսկ եթե ամուսինը նրանց չի հավանում:
- Հարցված կանանց միայն 19 տոկոսն է կարծիք հայտնել, որ «նորմալ է համարվում, երբ ամուսինն արգելում է իր կնոջն աշխատել», ընդ որում կարծիքը հայտնել են բացառապես գյուղական համայնքների կանայք:
- Հարցվածների 31 տոկոսը համաձայնել է, որ կնոջ պարտականությունն է սեռական հարաբերություն ունենալ ամուսնու հետ նույնիսկ չցանկանալու դեպքում:

Ընտանեկան բռնության շարժառիթների ընթրումը

- Գրեթե բոլոր հարցվածները համաձայնել են, որ «թմրադեղերի և ալկոհոլի օգտագործումը ընտանեկան բռնության առաջնային պատճառներից մեկն է»:
- Հարցվածների 82 տոկոսի կարծիքով «բռնացողի ինտելեկտի պակասը հանդիսանում է ընտանեկան բռնության առիթ»:
- Արմավիրցի կանանց 77 տոկոսը հայտնել է, որ «ընտանեկան բռնությունն առկա է, քանի որ կանանց մեծամասնությունը չի լքում իր վրա բռնացող տղամարդուն»:
- Հարցվածների շուրջ 72 տոկոսը կարծում է, որ «ֆինանսական խնդիրները կամ աշխատանքի կորուստը բարձրացնում է ընտանեկան բռնության հավանականությունը»:
- Նրանց 68 տոկոսը համաձայնել է, որ «ընտանեկան բռնությունը տղամարդկանց և կանանց միջև անհավասար հարաբերությունների արդյունք է»:
- Հարցված կանանց 57 տոկոսը նկատել է, որ «չատ տղամարդիկ բռնություն են գործադրում, քանի որ մանկության ընթացքում իրենց տանը բռնության ականատեսն են եղել»:
- Հարցվածների կեսը նշել է, որ «տուժածի կրթության/ինտելեկտի պակասը բարձրացնում է ընտանեկան բռնության հավանականությունը»:
- Հարցվածների 41 տոկոսը կարծում է, որ «այն տղամարդիկ, ովքեր ծեծում են իրենց կանանց, հիմնականում հոգեկան հիվանդներ են»:

Վերաբերմունքն ընտանեկան բռնության նկատմամբ

- Գրեթե բոլոր կանայք համաձայնել են, որ «ամուսինը երբեք չպետք է խփի իր կնոջը»:
- Տասը կանանցից չորսը կարծում են, որ «եթե ամուսինը կոպիտ է վերաբերվում իր կնոջը, ապա ընտանիքից դուրս մարդիկ պետք է միջամտեն»:
- Տասը կանանցի վեցն էլ կարծում են, որ «ոչ մեկի գործը չէ, եթե ամուսինը տան վեճի ընթացքում ֆիզիկապես բռնանում է իր կնոջ վրա»:

- Գրեթե բոլոր կանայք նշել են, որ «շատ դեպքերում ընտանեկան բռնությունն ավելի լավ է լուծել տան ներսում, քան թե դիմել ոստիկանության»:
- Տասը կանանցի երկուսը կոհիմեր ոստիկանության, եթե ենթարկվեր ընտանեկան բռնության:
- Տասը կանանցից ութը կարծում է, որ ընտանեկան բռնությունը տարածված խնդիր է Հայաստանում:
- Հարցվածների մեկ երրորդի կարծիքով է, որ ընտանեկան բռնությունը հասարակական խնդիր է և պետք է լուծվի կառավարության կողմից:

Կանանց նկատմամբ ֆիզիկական ուժի գործադրման արդարացումը

- Հարցվածների 75 տոկոսը համաձայնել է, որ ոչ հավատարիմ լինելն արդարացնում է ֆիզիկական ուժի գործադրումը կանանց նկատմամբ:
- Հարցված կանանց 42 տոկոսի կարծիքով, երեխաներին անտեսելը ֆիզիկական ուժի գործադրումն արդարացնող պատճառ է:
- Հարցվածների մեկ երրորդից ավելին կարծում է, որ ամուսնուն չենթարկվելը կարող է հանդիսանալ ֆիզիկական ուժի գործադրման պատճառ կնոջ նկատմամբ:
- Արմավիրի կանանց շուրջ մեկ երրորդը նշել է, որ առանց ամուսնուն տեղյակ պահելու ինչ-որ տեղ գնալը կարող է հանդիսանալ ֆիզիկական ուժի գործադրման պատճառ:
- Հարցվածների 43 տոկոսի կարծիքով ֆիզիկական ուժ կարելի է գործարդել ամուսնու հետ վիճելու դեպքում:
- Տասը կանանցից երկուսը կարծում են, որ տնային գործերը ոչ պատշաճ կատարելիս կինը կարող է ենթարկվել ֆիզիկական ճնշման:
- Հարցվածներից միայն 7 տոկոսի պատկերացմամբ ֆիզիկական ուժի գործադրման հավանականությունը մեծանում է, երբ կինը մերժում է սեռական հարաբերությունները:

Հոգեբանական ճնշում

- Արմավիրի կանայք միջին հաշվով, ճանաչում են մոտ 6 հոգեբանական ճնշման ենթարկված և 4 ֆիզիկական ճնշման ենթարկված կնոջ:
- Հարցված կանանց գրեթե 68 տոկոսը ենթարկվել է հոգեբանական ճնշման, ընդ որում 42 տոկոսը՝ հաճախ կամ երբեմն:
- Հարցվածներից կեսի տեղափոխությունները վերահսկվել են հաճախ կամ երբեմն:
- Հոգեբանական ճնշման միջադեպերի 64 տոկոսի դեպքում բռնարարներն ամուսիններն են, և 18 տոկոսի դեպքում՝ սկեսուրները:

Ֆիզիկական ճնշում

- Հարցվածների 38 տոկոսը ենթարկվել է ֆիզիկական ճնշման, ընդ որում 21 տոկոսը՝ հաճախ կամ երբեմն:
- Հարցված կանանց 31 տոկոսից սեռական հարաբերություն են պահանջել, երբ նա չի ցանկացել, իսկ 30 տոկոսին հարվածել են մարմնին, ձեռքերին կամ ոտքերին:
- Ֆիզիկական ճնշման ենթարկված հարցվածների 94 տոկոսը նշել է, որ բռնարարներն իրենց անուսիններն են:
- Ֆիզիկական ճնշման ենթարկված կանանց 76 տոկոսը ոչ մեկին չի դիմել բռնությանը վերջ տալու համար:
- Օգնության չդիմելու ամենահաճախ նշված պատճառներից են՝ «ինքնուրույն եմ լուծել խնդիրը», «այդպիսի խնդիրները պետք է լուծվեն ընտանիքի ներսում»:
- Օգնության դիմած հարցվածների 65 տոկոսը դիմել է ընտանիքի անդամներին, 22 տոկոսն օգնություն է խնդրել հարևաններից:
- Ոչ մի կին օգնության համար չի դիմել դատարաններ, իրավաբանական խորհրդատվության, բուժ.աշխատողների, հասարակական կազմակերպությունների, թեժ գիծ:
- Հարցվածների մոտ կեսը ընտանեկան բռնության դեմ պայքարի գործում վստահում է հասարակական կազմակերպություններին, իսկ 37 տոկոսը՝ ոստիկանությանը
- Հարցվածների 35 տոկոսը չի կարողացել նշել, թե որքանով է վստահելի աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը ընտանեկան բռնության դեմ պայքարում:
- Հարցվածների մեծամասնության կարծիքով ընտանեկան բռնությունը կարելի է նվազեցնել հանրային կրթության միջոցով իրազեկության բարձրացմամբ:

Աղյուսակ 1. Հարցագրույցների քանակն ըստ համայնքների

Համայնք	Քանակը	Տոկոսը
ք. Արմավիր	101	33,4
գ. Այգեշատ	21	7,0
գ. Արագածի	21	7,0
գ. Արմավիր	20	6,6
գ. Արևիկ	20	6,6
գ. Երասխահուն	20	6,6
գ. Ծաղկունք	20	6,6
գ. Զրաշեն	20	6,6
գ. Տանձուտ	20	6,6
գ. Փշատավան	20	6,6
գ. Ֆերիկ	19	6,3
Ընդամենը	302	100,0

Աղյուսակ 2. Լավ կինը միշտ ենթարկվում է իր ամուսնուն մույնիսկ համաձայն չլինելու դեպքում

	Քանակը	Տոկոսը
Համաձայն են	124	41,1
Մասամբ են համաձայն	81	26,8
Համաձայն չեն	94	31,1
Զգիտեն/չեն կարող ասել	3	1,0
Ընդամենը	302	100,0

Աղյուսակ 3. Կինը պետք է հնարավորություն ունենա ընտրելու իր ընկերներին, եթե նույնիսկ ամուսինը նրանց չի հավանում

	Քանակը	Տոկոսը
Համաձայն եմ	81	26,8
Մասամբ եմ համաձայն	39	12,9
Համաձայն չեմ	175	57,9
Չգիտեմ/չեմ կարող ասել	7	2,3
Ընդամենը	302	100,0

Աղյուսակ 4. Նորմալ է համարվում, երբ ամուսինն արգելում է իր կնոջն աշխատել

	Քանակը	Տոկոսը
Այո	24	7,9
Ավելի շուտ այո	33	10,9
Ավելի շուտ ոչ	20	6,7
Ոչ	221	73,2
Չգիտեմ/չեմ կարող ասել	4	1,3
Ընդամենը	302	100,0

Աղյուսակ 5. Կնոջ պարտականությունն է սեռական հարաբերություններ ունենալ ամուսնու հետ նույնիսկ չջանկանալու դեպքում

	Քանակը	Տոկոսը
Համաձայն եմ	33	10,9
Մասամբ եմ համաձայն	60	19,9
Համաձայն չեմ	209	69,2
Չգիտեմ/չեմ կարող ասել	0	0,0
Ընդամենը	302	100,0

Աղյուսակ 6. Կարծիքների միջին արժեքները.

	Միջինը
Ամուսինը երբեք չպետք է խփի իր կնոջը:	1,22
Շատ դեպքերում ընտանեկան բռնությունն ավելի լավ է լուծել տան ներսում, քան թե դիմել ոստիկանության:	1,28
Ընտանեկան բռնությունը տարածված խնդիր է Հայաստանում:	1,77
Դա ոչ մեկի գործը չէ, եթե ամուսինը տան վեճի ընթացքում ֆիզիկապես բռնանում է իր կնոջ վրա:	2,09
Եթե ամուսինը կոպիտ է վերաբերվում իր կնոջը, ապա ընտանիքից դուրս մարդիկ պետք է միջամտեն:	2,4
Ընտանեկան բռնությունը հասարակական խնդիր է և պետք է լուծվի կառավարության կողմից:	2,48
Հավանաբար ես կդիմեի ոստիկանություն, եթե ենթարկվեի ընտանեկան բռնության:	2,83

(1=համաձայն եմ և 3=համաձայն չեմ, «չգիտեմ/չեմ կարող ասել» պատասխաններն ընդգրկված չեն)

Աղյուսակ 7. Ընտանեկան բռնության պատճառները.

	Համաձայն են %	Մասամբ համաձայն են %	Համաձայն չեն %	Զգիտեն/չեն կարող ասել %
Թմրադեղերի և ակլոհոլի օգտագործումը ընտանեկան բռնության առաջնային պատճառներից մեկն է:	79,1	17,9	3	0
Բռնացողի կրթության/ինտելեկտի պակասը բարձրացնում է ընտանեկան բռնության հավանականությունը:	57,9	24,1	17,7	0,3
Ընտանեկան բռնությունն առկա է, քանի որ կանանց մեծամասնությունը չի լքում իր վրա բռնացող տղամարդուն:	54	22,8	14,2	9
Ֆինանսական խնդիրները կամ աշխատանքի կորուստը ընտանեկան բռնության պատճառներ են:	45,8	26	22	6,2
Ընտանեկան բռնությունը տղամարդկանց և կանանց միջև անհավասար հարաբերությունների արդյունք է:	44,6	23,2	22	10,2
Շատ տղամարդիկ բռնություն են գործադրում, քանի որ մանկության ընթացքում իրենց տանը բռնության ականատեսն են եղել:	41	15,9	32	11,1
Տուժածի կրթության պակասը բարձրացնում է ընտանեկան բռնության հավանականությունը:	38	14	36	12
Այն տղամարդիկ, ովքեր ծեծում են իրենց կանանց, հիմնականում հոգեկան հիվան են:	18,6	22,4	47	12

Աղյուսակ 8. Ընտանեկան բռնության արդարացման կարծիքների միջին արժեքները. (դասակարգված աճման կարգով)

	Միջինը
Ոչ հավատարիմ լինելն արդարացնում է ֆիզիկական ուժի գործադրումը կնոջ նկատմամբ:	1,70
Երեխաներին անտեսելն արդարացնում է ֆիզիկական ուժի գործադրումը կնոջ նկատմամբ:	2,44
Ամուսնուն չենթարկվելն արդարացնում է ֆիզիկական ուժի գործադրումը կնոջ նկատմամբ:	2,57
Առանց ամուսնուն տեղյակ պահելու ինչ-որ տեղ գնալն արդարացնում է ֆիզիկական ուժի գործադրումը կնոջ նկատմամբ:	2,65
Ամուսնու բարեկամների նկատմամբ ոչ հարգալից վերաբերմունքն արդարացնում է ֆիզիկական ուժի գործադրումը կնոջ նկատմամբ:	2,72
Ամուսնու հետ վիճելն արդարացնում է ֆիզիկական ուժի գործադրումը կնոջ նկատմամբ:	2,77
Տնային գործերը ոչ պատշաճ կատարելն արդարացնում է ֆիզիկական ուժի գործադրումը կնոջ նկատմամբ:	2,83
Սեռական հարաբերությունները մերժելն արդարացնում է ֆիզիկական ուժի գործադրումը կնոջ նկատմամբ:	2,97

(1=համաձայն են և 3=համաձայն չեն, «չգիտեն/չեն կարող ասել» պատասխաններն ընդգրկված չեն)

Աղյուսակ 9. Հոգեբանական ճնշման միջադեպերի հաճախականությունը. (դասակարգված նվազման կարգով)

	Հաճախ %	Երբեմն %	Հազվադեպ %	Երբեք %
Իմ տեղափոխությունները վերհսկվել են	21,2	31,8	14,9	32,1
Իմ հասարակական կյանքը տնից դուրս սահմանափակված է	21,4	17,8	24,2	36,6
Ինձ վրա գոռացել, ճշացել կամ ինձ հայհոյել են	10,2	20,0	24,6	45,2
Ինձ քննադատել են ուրիշների մոտ	9,8	10,4	21,0	58,8
Ինձ արգելել են տեսնել իմ ընտանիքի անդամներին/ընկերներին	9,3	7,9	14,0	68,8
Ինձ սպառնացել են	6,4	10,1	19,8	63,7
Իմ երեխաների վրա գոռացել կամ սպառնացել են	5,9	9,8	18,2	66,1
Ինձ նվաստացրել են ուրիշների մոտ	4,9	10,0	16,2	68,9
Ինձ զրկել են փողոցից	3,9	7,0	11,9	77,2
Ինձ արգելել են օգտվել հեռախոսից	3,0	3,0	9,9	84,1

**Աղյուսակ 10. Ֆիզիկական ճնշման միջադեպերի հաճախականությունը.
(դասակարգված նվազման կարգով)**

	Հաճախ %	Երբեմն %	Հազվադեպ %	Երբեք %
Ինձանից սեռական հարաբերություն են պահանջել, երբ ես չէի ցանկանում	13,2	17,8	9,0	60,0
Ձեռքի ափով հավածել են իմ մարմնին, ձեռքերին կամ ոտքերին	8,9	20,9	10,0	60,2
Իմ իրերը ջարդել են	8,6	9,7	11,2	70,5
Իրեր են շարտել ինձ վրա կամ սենյակի մեջ	7,9	7,0	13,6	71,5
Ինձ ուժեղ հրել կամ բռնել են	8,9	5,7	11,9	73,5
Իմ երեխաներին հարվածել կամ վնասել են	7,3	5,7	14,9	72,1
Ձեռքերս ոլորել են, մազերս՝ քաշել	2,3	5,9	8,9	82,9
Ինձ արգելել են շարժվել կամ դուրս գալ սենյակից	1,9	4,0	8,6	85,5
Բռունցքոով հարվածել են իմ մարմնին, ձեռքերին կամ ոտքերին	1,0	2,0	7,3	89,7
Ինձ փորձել են խեղդել կամ ձեռքով բերանս փակել	0,0	0,0	3,6	96,4

**Աղյուսակ 11. Ում/որտեղ է դիմել օգնության համար
(դասակարգված նվազման կարգով)**

	Քանակը	Տոկոսը
Ընտանիքի անդամներին	47	64,4
Հարևաններին	16	21,9
Ընկերներին	8	11,0
Ոստիկանությանը	2	2,7
Իրավաբանական խորհրդատվության	0	0,0
Դատարաններ	0	0,0

Բուժ.աշխատողներ	0	0,0
ՀԿ-ներ	0	0,0
Թեժ գիծ	0	0,0
Ընդամենը	73	100,0

**Աղյուսակ 12. Օգնության չդիմելու պատճառները.
(դասակարգված նվազման կարգով)**

	Քանակը	Տոկոսը
Ինքնուրույն են լուծել խնդիրը:	96	41,9
Այդպիսի խնդիրները պետք է լուծվեն ընտանիքի ներսում:	46	20,1
Լուրջ խնդիր չէր:	41	17,9
Դրսի օգնության դիմելն ամոթալի և անհարմար է:	18	7,9
Չկար որևէ մեկը, ում կարող էի դիմել օգնության համար:	12	5,2
Պարզապես չէի ուզում:	9	3,9
Վախենում էի հետևանքներից:	7	3,1
Անուսինս խոստացել էր փոխվել:	0	0
Չէի հավատում, որ որևէ մեկը կարող էր օգնել:	0	0
Այլ	0	0
Ընդամենը	229	100,0

**Աղյուսակ 13. Ընտանեկան բռնությունը նվազեցնող լուծումներին տրված
գնահատականների միջին արժեքները.
(դասակարգված նվազման կարգով)**

	Միջինը
Բարձրացնել իրազեկությունը հանրային կրթության միջոցով	7,79
Հոգեբանական խորհրդատվություն տրամադրել բռնարարներին	7,29
Հոգեբանական խորհրդատվություն տրամադրել տուժածներին	7,09
Ավելացնել օժանդակությունը ընտանեկան բռնության տուժածներին	5,38
Բանտարկել նրանց, ովքեր մեղավոր են ճանաչվել	4,36

(1=բոլորովին արդյունավետ չէ և 10=չատ արդյունավետ է)

**Աղյուսակ 14. Վստահությունը հանրային գործակալությունների նկատմամբ ընտանեկան
բռնության դեմ պայքարի գործում**

	չատ վստահելի %	որոշ չափով վստահելի %	որոշ չափով ոչ վստահելի %	բոլորովին ոչ վստահելի %	չգիտեմ/չեմ կարող ասել %
Հասարակական կազմակերպություններ	10	39	5	31	15
Ոստիկանություն	13	24	5	35	23
Դատարաններ	7	20	12	37	24
Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	2	10	6	44	38

**Ժողովրդագրական տվյալներ
Աղյուսակ 15. Հարցվածների ստացած ամենաբարձր կրթությունը.**

	Քանակը	Տոկոսը
--	---------------	---------------

Տարրական դպրոց (4 տարի)	8	2,6
Թերի միջնակարգ դպրոց	14	4,6
8-ամյա միջնակարգ դպրոց	19	6,3
10-ամյա միջնակարգ դպրոց	98	32,5
Քոլեջ, մասնագիտական դպրոց/ուսումնարան, տեխնիկում	109	36,1
Բարձրագույն (4 կամ 5 տարի)	54	17,9
Գիտական կոչում	0	0,0
Ընդամենը	302	100,0

Աղյուսակ 16. Հարցվածների զբաղվածությունը.

	Քանակը	Տոկոսը
Աշխատանք պետական սեկտորում	49	16,2
Աշխատանք մասնավոր սեկտորում	16	5,3
Ինքնազբաղվածություն/սեփական գործ, բիզնես	12	4,0
Գյուղատնտեսություն	51	16,9
Անասնապահություն	9	3,0
Տնային տնտեսուհի	158	52,3
Թոշակառու	6	2,0
Ուսանող	1	0,3
Ընդամենը	302	100,0

Աղյուսակ 17. Հարցվածների ամուսնական կարգավիճակը.

	Քանակը	Տոկոսը
Երբեք չամուսնացած	12	4,0
Ամուսնացած	252	83,4
Այրի	18	6,0
Ամուսնալուծված	15	5,0
Ամուսնուց առանձին ապրող	5	1,7
Ընդամենը	302	100,0